

* * *

* * *

Է՛յ, դու ջահել, հպարտ հասակ,
Անցար ոսկի ամպի պէս,
Քեզ հետ տարաւ երգեր ու սէր,
Տարաւ Քարունն իմ սրէս:

Aye, thou young age, joyous and proud,
Departed like a gold'n cloud,
With thee did songs and love depart,
Depart'd too Spring from my heart.

Քար կը սեղմեմ կրծքիս հիմա,
Կ'ելնեմ սարերը լալու,
Է՛յ, կ'ուզես լաց, կ'ուզես խնդա,
Անցեալն ա՛լ ետ չի գալու:

Upon my heart keep I a stone,
Roam about the heights and moan;
Aye, laugh if you like, or weep sore,
But the past comes back no more.

Ա.Ի.ԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԻԱՆ

AVEDIK ISSAHAKIAN

Թրգմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Trans. M. MANOUKIAN

Օ Ր Ե Ր Ը

Օրերն նման են կիներու պչոտ,
Հեռուէն քրտացող ա՛յնքան ցանկալի,
Կիներ շարունակ ոռոնք երբ զան մօտ՝
Գութնը կը շարժեն սէրէդ սաւելի:

Երազուած օրը բայց կը ժամանէ,
Նետած իր ուսէն փառքի ծիրանին,
Որուն ներքեւը իր մերկութիւնն է,
Փլուզումը մեր երազի շէնքին:

Օրերը հեռուէն խոստումը ունին
Թէ պիտի ըլլան պայծառ, արեւոտ,
Ու այդ խոստումով, փուն ու ստայոյդ,
Միտքն մեր խոցուած կը կապեն կեան-
փին:

Օրերն նման են կիներու ցոփ, նենգ,
Իրենց հաճոյքին ընելու մեզ զոհ,
Անոնց սիրքը քաւ ուրբան ողորմեմ,
Նոյնքան կը թողուն մեզ բեկուած,
դժգոհ:

Գ. ՀԱՐՏԱՐ